



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30 » 11 2021թ. 180-Ն ք. Երևան

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ
«ԴՈՋԻՄԵՏՐԱԿԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՄԵՏՐԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՉԱՓԱՆՄՈՒՇ» ՉԱՓԱՆՄՈՒՇԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ՉԱՓԱՆՄՈՒՇ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության գիտական խորհրդի նախագահի № 1134 առ 29.11.2021թ. զեկուցագիրը, զեկուցագրում առկա որոշման նախագիծը, դոզիմետրական և ռադիոմետրական չափումների ոլորտի հինգ մասնագետներից կազմված աշխատանքային խմբի չափագիտական բնութագրերին տվյալ չափանմուշի համապատասխանության վերաբերյալ և ազգային չափանմուշ ճանաչելու հնարավորության մասին ներկայացրած եզրակացությունները, Ընկերության տնօրենի 2021 թվականի հուլիսի 6-ի «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում առկա չափման միջոցներից չափանմուշային համալիրներ կազմավորելու և դրանց փաստաթղթերի ձևակերպման և լրամշակման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» № 88-Ն հրամանով կազմավորված աշխատանքային խմբի չափագիտական բնութագրերին տվյալ չափանմուշի համապատասխանության վերաբերյալ և ազգային չափանմուշ ճանաչելու հնարավորության մասին ներկայացրած եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում գտնվող Դոզիմետրական և ռադիոմետրական չափումների չափանմուշը որպես « ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇ»:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՏ ՐԱԲՈՅԱՆ